



Հովհաննես Թումանյան

Ծիտր

Լինում է, չի լինում՝ մի ծիտ:

Մի անգամ էս ծտի ոտը փուշ է մտնում: Դեռ է թռչում, դեռ է թռչում, տեսնում է՝
մի պատավ փետի է ման գալի, թոնիր վառի, հաց թխի: Ասում է .

Նանի՛ ջան, նանի՛, ոտիս փուշը հանի, թոնիրդ վառի, ես էլ գնամ քուշուջ անեմ,
գլուխս պահեմ:

Պատավը փուշը հանում է, թոնիրը վառում:

Ծիտը գնում է, ետ գալի, թե՛ փուշը ետ տուր ինձ:

Պատավն ասում է .

Փուշը թոնիրն եմ գցել:

Ծիտը կանգնում է, թե՛

Իմ փուշը տուր, թե չէ՛ դեռ թռչեմ, դեռ թռչեմ, լոշիկդ առնեմ, դուրս թռչեմ:

Պատավը մի լոշ է տալի: Ծիտը լոշն առնում է թռչում:

Գնում է տեսնում՝ մի հովիվ անհաց կաթն է ուտում: Ասում է .

Հովիվ ախպեր, կաթն ինչո՞ւ ես անհաց ուտում: Ա՛յ լոշը, ա՛ն, կաթնի մեջ բրդի՛,
կե՛ր . ես էլ գնամ քուջուջ անեն, գլուխս պահեն:

Գնում է, ետ գալի, թե՛ լոշս տուր:

Հովիվն ասում է .

Կերա:

Չէ՛, ասում է, իմ լոշը տուր, թե չէ դես թոչեն, դեն թոչեն, գառնիկդ առնեն, դուրս
թոչեն:

Հովիվը ճարահատաժ մի գառն է տալի: Առնում է թոչում: Գնում է տեսնում՝ մի
տեղ հարսանիք են անում, մսացու շունեն, որ մորթեն: Ասում է.

Ի՞նչ եք մոլորել: Ա՛յ, իմ գառն առեք, մորթեցեք, քեֆ արեք . . . Ես էլ գնամ
քուջուջ անեն, գլուխս պահեն:

Գնում է, ետ գալի թե՛ իմ գառը տվեք:

Ասում են .

Մորթել ենք, կերել, ո՞րտեղից տանք:

Մա կանգնում է թե՛ չէ, իմ գառը տալիս եք՝ տվեք, թե չէ՛ դես թոչեն, դեն թոչեն,
հարսին առնեն, դուրս թոչեն:

Ու հարսին առնում է, թոչում:

Գնում է, գնում, գնում է, տեսնում՝ մի աշուղ մի ճամփով գնում է:

Ասում է .

Աշուղ ախպեր, առ էս հարսին, պահի՛ քեզ մոտ: Ես էլ գնամ քուջուջ անեն,
գլուխս պահեն:

Գնում է, ետ գալի, աշուղի առաջը կտրում թե՛ իմ հարսը ինձ տուր:

Աշուղն ասում է .

Հարսը գնաց իրենց տուն:

Սա թե՛ չէ՛, իմ հարսը տուր, թե չէ՛ դես թռչեմ, դեն թռչեմ, սագիկդ առնեմ, դուրս թռչեմ:

Աշուղը սագը տալիս է իրեն:

Սագն առնում է, ուսը զցում, թռչում, մի տեղ նստում է, սկսում է ածել ու ճովտալով երգել .

Ծընգւր, մընգւր,
Փուշիկ տվի, լոշիկ առա,
Լոշիկ տվի, գառնիկ առա,
Գառնիկ տվի, հարսիկ առա,
Հարսիկ տվի, սագիկ առա,
Սագիկ առա, աշուղ դառա,
Ծընգւր, մընգւր,
Ծի՛վ, ծի՛վ:

Մին էլ հանկարծ սագը վեր ընկավ ջարդվեց, ծիտը թռավ գնա՛ց, հեքիաթն էլ վերջացա՛վ: